Հաշվետվություն

Ես՝ Բաբկեն Մկրտչի Գաբրիելյանս, ՀՀ պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) տարածքային կառավարման և ենթակառուցվածքների ոլորտների վերահսկողության վարչությունում (այսուհետ՝ Վարչություն) որպես փորձագետ աշխատելու ժամանակահատվածում (22.10.2024-23.04.2025թթ.) իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. Վարչության կողմից իրականացված մշտադիտարկումների շրջանակներում գործուղվել եմ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք, որտեղ ուսումնասիրել եմ թվով 1 գնման ընթացակարգի շրջանակում «Ծաղկահովիտի առողջության կենտրոն» շենքի կառուցման նախագծա - նախահաշվային փաստաթղթերը, ծավալաթերթ - նախահաշիվները և կատարել հսկիչ չափագրումներ: Կատարված ուսումնասիրության արդյունքների հիման վրա կազմել եմ համապատասխան արձանագրություններ:
2. Վարչության կողմից իրականացված մշտադիտարկումների շրջանակներում գործուղվել եմ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկ բնակավայր, որտեղ ուսումնասիրել եմ թվով 2 գնման ընթացակարգերի շրջանակներում վերակառուցված մանկապարտեզի նախագծա - նախահաշվային փաստաթղթերը, ծավալաթերթ - նախահաշիվները և կատարել հսկիչ չափագրումներ: Կատարված ուսումնասիրության արդյունքների հիման վրա կազմել եմ համապատասխան արձանագրություններ:
3. Խմբի կազմում շարունակում եմ մասնակցել ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմում իրականացվող ուսումնասիրության աշխատանքներին, մասնավորապես՝ ուսումնասիրում եմ սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում կատարված շինարարական աշխատանքների նախագծա - նախահաշվային փաստաթղթերը, ծավալաթերթ - նախահաշիվները և կատարում հսկիչ չափագրումներ: Կատարված ուսումնասիրության արդյունքների հիման վրա կազմում եմ համապատասխան արձանագրություններ:
4. Աջակցել եմ Վարչության գործառույթների շրջանակում իրականացվող աշխատանքներին և կատարել անմիջական ղեկավարի այլ հանձնարարականներ:

ՀՀ ՊՎԾ տարածքային կառավարման և

ենթակառուցվածքների ոլորտների վերահսկողության

վարչության փորձագետ՝ Բաբկեն Գաբրիելյան

23.04.2025թ.